

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի
2016թ. դեկտեմբերի 27-ի նիստի**

Խորհրդի 42 անդամներից ներկա էին 38-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Ս.Սուջյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվերակության դրեց օրակարգը, որը միաձայն ընդունվեց (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. **Գիտական հաղորդում (ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական դատավարության ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Ս.Մարկոսյան):**
2. **Պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Ա.Ալեքսանյանին և նույն ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Ս.Սիմոնյանին դոցենտի գիտամանկավարժական կոչում շնորհելու մրցույթին մասնակցության երաշխավորության հարց:**
3. **Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին:**
4. **Հաղորդում 2016-2017 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի նախապատաստության մասին:**
5. **Ֆակուլտետի կարիերայի կենտրոնի ղեկավար Լիլիթ Պետրոսյանի հաղորդումը ձեռնարկված միջոցառումների և ապագա ծրագրերի մասին:**
6. **Ընթացիկ հարցեր:**

1. **ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական դատավարության ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Ս.Մարկոսյանի գիտական հաղորդումը ՀՀ դատական նոր օրենսգրքի Հայեցակարգի նախագծի վերաբերյալ:**

Ձեկուցողն ընդհանուր գծերով ներկայացրեց ՀՀ դատական նոր օրենսգրքի հայեցակարգային բնութագիրը, մասնավորապես անդրադարձավ դատական իշխանության ինքնակառավարման մարմիններին, Բարձրագույն դատական խորհրդի կազմակերպման և գոնծունեության հարցերին, դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, նրանց լիազորությունները դադարեցնելու հիմնախնդիրներին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

2. ԼՄԵՑԻՆ. Պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Ա.Ալեքսանյանին և նույն ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Տ.Սիմոնյանին դոցենտի գիտամանկավարժական կոչում շնորհելու մրցույթին մասնակցության երաշխավորության հարց:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, պրոֆ. Ս.Դիլբանդյանը ծանոթացրեց թեկնածուների անձնական գործի տվյալներին, հայտնեց, որ ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են դոցենտի գիտամանկավարժական կոչում շնորհելու համար ՀՀ կառավարության կողմից սահմանված պահանջներին, ինչպես նաև ներկայացրեց Պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի միաձայն երաշխավորությունը և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի դրական եզրակացությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Վաղարշյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

Խորհուրդը որոշեց անցկացնել բաց քվեարկություն, որի արդյունքում միաձայն բավարարվեց մրցութային հանձնաժողովի միջնորդությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել քվեարկության արդյունքները և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին Պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Ա.Ալեքսանյանին և նույն ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Տ.Սիմոնյանին շնորհել դոցենտի գիտամանկավարժական կոչում:

3. ԼՄԵՑԻՆ. Միջազգային և եվրոպական իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ ի.գ.դ., պրոֆ. Վ.Ստեփանյան:

Միջազգային և եվրոպական իրավունքի ամբիոնի վարիչ, պրոֆ. Վ.Ստեփանյանը ամփոփ տեղեկություններ ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում իր ղեկավարած ամբիոնի ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Հովհաննիսյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվետվությունը գնահատել դրական (հաշվետվությունը կցվում է):

4. ԼՄԵՑԻՆ. Հաղորդում 2016-2017 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի նախապատաստության մասին:

Դեկանի տեղակալ, պրոֆ. Հ.Խաչիկյանն ընդհանուր գծերով ներկայացրեց 2016-2017 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի նախապատաստության հետ կապված հարցերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Գաբուզյանը, դոց. Ա.Մարգարյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

5. ԼՍԵՑԻՆ. Ֆակուլտետի կարիերայի կենտրոնի ղեկավար Լիլիթ Պետրոսյանի հաղորդումը ձեռնարկված միջոցառումների և ապագա ծրագրերի մասին:

Ֆակուլտետի կարիերայի կենտրոնի ղեկավարը հայտնեց, որ բացվել է Կարիերայի կենտրոնի ֆեյսբուքյան էջ, որով պարբերաբար տեղեկատվություն է հաղորդվում թափուր աշխատատեղերի, պրակտիկայի հնարավորությունների մասին, կազմակերպվել է սեմինար ռեզյումե և մոտիվացիոն նամակ գրելու հմտությունների հետ կապված, մշակվել է Կարիերայի կենտրոնի շրջանավարտների տվյալների բազայի օնլայն հայտ, որը կգործարկվի 2017 թվականի հունվարից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Ն.Այվազյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

6. Ընթացիկ հարցեր

5.1 ԼՍԵՑԻՆ. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի միջազգային և եվրոպական իրավունքի ամբիոնի հայցորդ Դիանա Շավինինա-Քալաշյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ստեփանյանը, դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի միջազգային և եվրոպական իրավունքի ամբիոնի հայցորդ Դիանա Շավինինա-Քալաշյանի՝ «Մարդու իրավունքների միջազգային իրավունքի ժամանակակից չափորոշիչները՝ քրիստոնեության և իսլամի հոգևոր բարոյական սկզբունքների համատեքստում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.06 - «Միջազգային իրավունք»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Վ.Հովհաննիսյանին:

5.2 ԼՍԵՑԻՆ. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի միջազգային և եվրոպական իրավունքի ամբիոնի հայցորդ Ռոզա Պայտյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ստեփանյանը, դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի միջազգային և եվրոպական իրավունքի ամբիոնի հայցորդ Ռոզա Պայտյանի՝ «Փախստականների միջազգային իրավական պաշտպանությունը համաշխարհային իրավակարգի գլոբալ փոփոխությունների համատեքստում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.06 - «Միջազգային իրավունք»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Վ.Հովհաննիսյանին:

5.3 ԼՄԵՑԻՆ. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առաջին տարվա ասպիրանտ Նազելի Թովմասյանին ատեստավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Վ.Ստեփանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նազելի Հովհաննիսյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 60 կրեդիտ, ներառյալ՝ 20 կրեդիտ ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 6 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 4 կրեդիտ պրակտիկայից, 8 կրեդիտ հետազոտական աշխատանքից և 22 կրեդիտ գիտահետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

5.4 ԼՄԵՑԻՆ. Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Արտակ Ղազարյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ս.Դիլբանդյանը, դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Արտակ Ղազարյանի՝ «Մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի առանձնահատկությունները քրեական դատավարությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.04 - «Դատական իրավունք»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Ս.Դիլբանդյանին:

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ.Սուջյան

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՄԲԻՈՆ

2015-2016 թթ. հաշվետու ժամանակաշրջանում գիտաուսումնական գործունեության վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն

1. Գիտական գործունեություն

Ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանք

ա) Ուսումնական պլան, ուսումնական ծրագրեր

Ամբիոնի անդամները դասավանդում են ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և միջազգային հարաբերությունների ֆակուլտետի բակալավրիատում և մագիստրատուրայում, ինչպես նաև տնտեսագիտական ֆակուլտետում, ԵՊՀ Եվրոպական հետազոտությունների կենտրոնի մագիստրատուրայում, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտում:

2015-2016 ուս. տարում ամբիոնը շարունակում է դասավանդումը ֆակուլտետի Մեթոդխորհրդի կողմից ներկայացված չափանիշների հիման վրա վերանայված ծրագրերով /թվով 20/, յուրաքանչյուր քննության և ստուգարքի համար կազմվել են համապատասխան առարկաների հարցաշարերը:

բ) Մեթոդական աշխատանք

Ամբիոնի անդամների վերապատրաստման գործընթացում մեծ ուշադրություն է դարձվել դասավանդման առաջատար մեթոդիկաների ուսումնասիրությանը և գործնական հմտությունների ձեռք բերմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնում քննարկման առարկա են դարձել դասավանդման մեթոդիկայի բարելավումն ու նոր մեթոդների կիրառումը: Արդյունքում ամբիոնը ներդրեց գիտելիքների ստուգման նոր եղանակներ, հատկապես ընթացիկ քննությունների իրականացման գործընթացում: Ամբիոնում շարունակվել են աշխատանքները ընթացիկ քննությունների թեստավորման համակարգի կատարելագործման ուղղությամբ: Նպատակը կայանում է նրանում, որ

առավելագույնս հնարավորություն տրվի ուսանողներին ցուցադրել իրենց ունեցած իրական գիտելիքը և ստանալ օբյեկտիվ գնահատական:

Նկատի ունենալով, որ կրեդիտային համակարգի պայմաններում կարևորվում է ինքնուրույն աշխատանքի կատարումը, մագիստրոսական թեզերի որակով և ժամանակին պաշտպանության ներկայացնելու նպատակով ամբիոնն այդ ուղղությամբ ձեռնարկել է որոշակի աշխատանքներ: Հանձնարարվել է դասախոսներին առնվազն ամիսը մեկ անգամ հանդիպել մագիստրանտների հետ, ճշտել նրանց կողմից կազմված աշխատանքի պլանը, օգնել գրականության ցանկի պատրաստման հարցում:

2015-2016 ուս.տարվա *առաջին կիսամյակի*՝ ուսանողության շրջանում անցկացրած հարցումների արդյունքում ամբիոնի միջին գնահատականը կազմում է *4.49*:

Գիտահետազոտական աշխատանք

2015-2016 ուս. տարում ամբիոնի դասախոսները հրատարակել են *1* *մենագրություն*

Մենագրություն /1/

Vigen Kocharyan “Armenian Genocide in International Legal Documents”, Author’s Edition, ISBN 979-9939-0-1789-1, Yerevan 2016, 320 pages

Հոդված /11/

1. Варданян К. А. *“Некоторые проблемы правового регулирования защиты беженцев и убежища в законодательстве РА”*, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու (նվիրվում է ՀՀ Սահմանադրությունը ընդունելու 20-ամյակին, 8 դեկտեմբերի, 2015թ.), Երևան, ԵՊՀ հրատ., 2016թ., էջեր 308-328:

2. Ղազիսյան Ա. Գ. «Վերպետական ինտեգրացիոն միավորումներին անդամակցելու սահմանադրա-իրավական հիմնախնդիրները /Երևան, ԵՊՀ հրատ., 2016թ. էջեր 294-308/

3. Քոչարյան Վ. Վ. «Հայոց Ցեղասպանության միջազգային իրավական որակումը և դրա ժխտման համար քրեական պատասխանատվությունը» «Օրինականություն», 2015, N1, էջ 40-57

4. Оганнисян В. А. “Конституционный Суд Республики Армения как важнейший инструмент имплементации международных обязательств страны по правам человека”. Միջազգային գիտաժողովի նյութեր՝ նվիրված Տաջիկիստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի ձևավորման 20 ամյակին, Դուշանբե, «ЭР-граф» 2015. էջեր.100-111.

5. Մինոնյան Ա. Ա. «Զարգացման իրավունքի հայեցակարգի նորմատիվային իրավական բովանդակությունը ժամանակակից միջազգային իրավունքում. Պետություն և իրավունք, թիվ 2 /68/, Երևան 2015թ., էջեր 104-110

6. Անի Խլդաթյան «Պատասխանատվության ինստիտուտի կիրառման առանձնահատկությունները օդային հաղորդակցության ոլորտում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2015թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, Երևան 2016թ., էջեր 591-599

7. Անի Աթանեսյան «ԱՀԿ-ի կողմից վեճերի կարգավորման գործընթացում կիրառվող պատասխանատվության տեսակները ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2015թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, Երևան 2016թ., էջեր 583-591

8. Վ. Պողոսյան, Ն. Սարգսյան, Հայաստանի Հանրապետության 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը. Համառոտ պարզաբանումներ, Տիգրան Մեծ, 2016թ., 448 էջ

9. Վ. Հովհաննիսյան “Հաշմանդամների՝ որպես խոցելի խավի իրավունքների պաշտպանության վիճակը Հայաստանի Հանրապետությունում” Մարդու առանձին սոցիալական իրավունքների պաշտպանության երաշխիքները Հայաստանի Հանրապետության 2015թ. փոփոխություններով Սահմանադրության համատեքստում, Երեվան 2016թ

10. V. Vardanyan “The Armenian Genocide and its Influence to the Development of Rafael Lemkin’s Concept” Պետք է լույս ընծայվի Վարշավայի Համալսարանի կողմից մոտ ապագայում: Հանձնված է տպագրության

11. В. Оганнесян доклад на Международном научно-практическом мероприятии “Дни международного права”. Екатеринбург, 24-26 ноября 2016г.

Գիտական թեմաների կարարում՝ /1/.

- Իրավագիտության ֆակուլտետը /ամբիոնի անդամ Վ. Վարդանյանի ղեկավարությամբ/ ՀՀ Սփյուռքի նախարարության ֆինանսավորմամբ շահել է դրամաշնորհ “Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման իրավական հիմնախնդիրները” վերստությամբ ծրագիր իրականացնելու համար, որի նպատակն է Ցեղասպանության վերաբերյալ միջազգային-իրավական փաստաթղթերի համալիր ուսումնասիրությունը:

Ամբիոնում պարբերաբար նիստերի ընթացքում ներկայացվում են ամբիոնի անդամների հաղորդումները և գիտական զեկուցումները:

- մասնակցություն գիտաժողովներին

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնն ակտիվորեն մասնակցել է ՀՀ-ում և արտերկրում կազմակերպվող գիտաժողովներին և գիտահետազոտական

ծրագրերին: 2015-2016 ուս. տարվա ընթացքում ամբիոնի անդամները մասնակցել են հետևյալ գիտաժողովներին՝

1. «Մարդու իրավունքների և ժողովրդավարացման կրթության զարգացման հնարավորությունները խորագրով գիտաժողով (Վենետիկ, Իտալիա, սեպտեմբեր, 2015թ.)
2. Տարեկան փոխօգնության գիտաժողով – Մարզիչների վերապատրաստում (Ստրասբուրգ, 2015թ.)
3. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի, ՄԱԿ ՓԳՀ-ի և «Առաքելություն Հայաստանե ՀԿ-ի կողմից «Փախստականների իրավունք» վերստառությամբ կազմակերպված 5-րդ Ամառային դպրոց (Դիլիջան, ՀՀ, հոկտեմբերի 8-10, 2015թ.)
4. Վարչավայի Համալսարանի և Իվան Ֆրանկոյի ազգային համալսարանի կողմից կազմակերպված գիտաժողով “Քաղաքացիական անձինք ժամանակակից գինված ընդհարումներում, Ռաֆայել Լեմկինի ժառանգությունը” (Լվով Ուկրաինա, հոկտեմբեր, 2015թ.)
5. ՀՀ-ԵՄ Համագործակցության առևտրի, տնտեսական և համապատասխան իրավական հարցերով ենթակումիտեի տասնչորսերորդ նիստ (Երևան, հոկտեմբերի 16, 2015 թ.)
6. ՀՀ-ԵՄ Համագործակցության կումիտեի 16-րդ նիստ (Երևան, նոյեմբերի 4, 2015 թ.)
7. «Միջազգային հումանիտար իրավունք. խնդիրներն ու զարգացման հեռանկարները IV միջազգային գիտաժողով (Երևան, նոյեմբերի 9, 2015 թ.)
8. «Արդարադատություն երեխաների համար խորագրով համաժողով (Թբիլիսի, նոյեմբերի 12-13, 2015թ.)
9. «Էլեկտրոնային կառավարման օրենսդրական կարգավորումե խորագրով համաժողով (Լոնդոն, նոյեմբեր 18-22, 2015թ.)
10. ԿԽՄԿ Երևանյան գրասենյակի և Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի կողմից կազմակերպված յոթերորդ միջազգային Գիտաժողով երիտասարդ հետազոտողների համար (Երևան, նոյեմբեր, 2015թ.)
11. «Եվրասիական ինտեգրացիա. Եվրասիական տնտեսական միության պայմանագրի ստորագրումից մեկ տարի անց (Սանկտ Պետերբուրգ, նոյեմբեր, 2015թ.) Զեկույցի թեմա՝ «Եվրասիական ինտեգրացիոն գործընթացի իրավական հիմնահարցերը
12. Արդարադատության արդյունավետության եվրոպական կումիտեի (CEPEJ) 26-րդ լիագումար նիստ (Ստրասբուրգ, Ֆրանսիա, դեկտեմբերի 10-11, 2015 թ.)

13. Հունգարիայի Հելսինկյան կազմակերպության, ՄԱԿ ՓԳՀ Գլոբալ ուսուցման կենտրոնի և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի կողմից «Փախստականների իրավունքի արդյունավետ ուսուցման կազմակերպումը Փախստականների իրավունքի քրեստոմատիայի հիման վրա (ԱՊՀ+)» վերաառությամբ կազմակերպված գիտական սեմինար (Երևան, ՀՀ, 2-5 փետրվարի, 2016թ.)
14. Հանդիպում-քննարկում Նորվեգիայի երեխաների իրավունքների օմբուդսմեն պրն. Ռեյդար Հյորմանի հետ (Երևան, փետրվարի 2, 2016թ.)
15. Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրի կատարմանը նվիրված աշխատաժողով, (Երևան, փետրվարի 26-27, 2016 թ.)
16. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ կողմից «Միգրանտների իրավունքները» վերաառությամբ կազմակերպված սեմինար (Ծաղկաձոր, ՀՀ, մարտի24-26, 2016թ.)
17. «Արևելյան գործընկերության երկրներում կիրքեր հանցավորության ոլորտում հանրային և մասնավոր սեկտորների համագործակցության ամրապնդումե խորագրով գիտաժողով (2016 թվականի ապրիլի 6-7, Կիև)
18. «1915թ. հայերի ցեղասպանությունը` որպես միջազգային իրավախախտումների նոր վտանգի պատմական նախադրյալե Միջազգային գիտաժողով. «Միջազգային իրավունքը այսօր. Խնդիրները և հեռանկարները» (Կամչատկա, ապրիլ 18-19, 2016թ.)
19. «Մարդու իրավունքների և ժողովրդավարության տարածաշրջանային մարտահրավերները խորագրով գիտաժողով (Բուենոս-Այրես, Արգենտինա, ապրիլ 2016թ.)
20. «ԵՏՄ ակտերի դերը ազգային իրավական համակարգումե (Սանկտ Պետերբուրգ, ապրիլ, 2016) Զեկույցի թեմա` Եվրասիական միության ակտերը ՀՀ իրավական հիմնահարցում
21. Regional cooperation in Eastern Partnership Countries (Georgia-Armenia) on Counterfeit Medicines and intellectual property, 28-29 June 2016, Tbilisi, Georgia
2. L'université francophone d'été de Lyon, 11 juillet - 15 juillet 2016
22. ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՊԱՌԼԱՄԱՆԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ, 07 սեպտեմբերի, 2016թ., ք. Երևան
23. Սեմինար Իրավաբանական կրթության և դասավանդման մեթոդների վերաբերյալ, Երևան, 19-20 սեպտեմբեր, 2016
24. Regional Roundtable – Initial Stage of University Education in Jurisprudence Focusing on profession in the course of academic education, 22.-23.09.2016, Tbilisi
25. Strengthening the Participation of Civil Society in Armenia and Georgia October 27-28, 2016, Bonn University, Germany
26. Միջազգային Իրավունքի Ասոցիացիայի 77-րդ «Միջազգային իրավունք և պետական պրակտիկա. առկա՞ է արդյոք հյուսիս-հարավ տարանջատում»

խորագրով գիտաժողով, 2016թ. օգոստոսի 7-ից 11-ը, Յոհաննեսբուրգ,
Հարավային Աֆրիկայի Հանրապետություն

27. Международная конференция «Защита основных прав граждан и национальная безопасность в современном мире. Роль конституционных судов ». София, 21-22 сентября 2016 года.

28. Արևելյան գործընկերության պետություններում կիբերհանցագործությունների շրջանակներում հանրային և մասնավոր սեկտորների համագործակցության ոլորտում երկրորդ տարածաժաշրջանային աշխատաժողով, 2016թ. սեպտեմբերի 19-ից 20-ը, Մինսկ, Բելառուսի Հանրապետություն

29. TAIEX-ի շրջանակներում առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ ներառական կրթության իրավական կարգավորումների վերաբերյալ աշխատաժողով, 2016 թվականի հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 4-ը, Հելսինկի, Ֆինլանդիայի Հանրապետություն

30. Արևելյան գործընկերության պետություններում կիբերհանցագործությունների շրջանակներում հանրային և մասնավոր սեկտորների, ինչպես նաև էլեկտրոնային ապացույցների ոլորտում համագործակցությանը նվիրված աշխատաժողով, 2016 թվականի հոկտեմբեր

31. Եվրոպայի ապաստանի աջակցության գրասենյակի (EASO) վերապատրաստման մոդուլի սեմինար «Փախստականների կարգավիճակի բացառումը» թեմայով (ռուսերեն լեզվով)՝ կազմակերպված ՀՀ ՏԿԶՆ ՄՊԾ և ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից, հուլիս 11-12, 2016, Երևան, Հայաստան

32. «Փախստականների իրավունք» խորագրով ամառային դպրոց՝ կազմակերպված ՄԱԿ ՓԳՀ-ի աջակցությամբ «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի կողմից 29-31 հոկտեմբեր, 2016, Դիլիջան, Հայաստան կանի նոյեմբերի 7-ից 8-ը, Երևան:

33. “Կրոնի և խողճի ազատությունը ճգնաժամի պարագայում. Ինչու մենք չենք կարող զերծ մնալ”, Տարտուի համալսարան, Իրավունքի և կրոնական ուսմունքների միջազգային կենտրոն, 2016թ. հունիս, Տալին, Էստոնիա,

34. “Միջազգային իրավունքը և կրոնը”, միջազգային գիտաժողով, “Բրիգամ Յանգ” համալսարան, 2016թ. հոկտեմբեր, Պրովո, Յութայի Նահանգ, ԱՄՆ,

35. “Ցեղասպանությունը, հիշողությունը և կանխարգելումը”, միջազգային գիտաժողով, Ռուսաստանի հայերի միություն, ՄԱԿ-ի տեղեկատվական կենտրոն, Մոսկվայի կառավարություն, 2016թ. դեկտեմբեր, Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն

36. Հանդիպում-քննարկում ՌԴ մարդու իրավունքների պաշտպան Ս. Ն. Մոսկալովկայի հետ, 2016թ. դեկտեմբերի 21

2. Ուսումնական գործունեություն

1. Գիտամանկավարժական կադրերի պատրաստում և վերապատրաստում.

ամբիոնն ունի 2 հեռակա ուսուցմամբ ասպիրանտ, 1 հայցորդ, Պարբերաբար քննարկվում են նրանց աշխատանքի ընթացքը, գիտական հոդվածները երաշխավորվում են տպագրության, այլ աջակցություն է ցուցաբերվում նրանց աշխատանքին: Ամբիոնի ասպիրանտներն ու հայցորդներն ակտիվորեն ներգրավված են նաև ուսումնական պրոցեսում:

- ամբիոնի հիմնական դասախոսներից Կ. Գևորգյանը, Ք. Վարդանյանը, Լ. Սարգսյանը ավարտել են 2011-2016 թթ. ԵՊՀ դասախոսների վերապատրաստման ծրագիրը,
- ամբիոնի անդամ Ա. Սիմոնյանը մասնակցել է «Առողջապահական իրավունքի առաջին միջազգային համաժողովին» 2016թ. նոյեմբերի 7-9, ք. Երևան
- ամբիոնի անդամ Ա. Սիմոնյանը մասնակցել է «Իրավական գիտությունների դասավանդման հմտություններ» վերապատրաստման դասընթացին, 2016թ. նոյեմբերի 30-դեկտեմբերի 1, Բորժոմի, Վրաստան
- ամբիոնի անդամներ Ք. Վարդանյանը, Ա. Սարգսյանը և Ա. Սիմոնյանը մասնակցել են «Դասախոսների վերապատրաստում Արմենկայի շրջանակներում»

վերապատրաստման դասընթացներին, 2016թ. դեկտեմբերի 19-20, ք. Երևան

- Եվրոպական և միջազգային իրավունքի մասնագիտացմամբ ուսանողները 2016թ. նոյեմբերի 25-27 ընկած ժ.կ հատվածում մասնակցել են ՄՄԻ վերաբերյալ դատախաղին /IHL Moot Court Competition/ և զբաղեցրել 2-րդ մրցանակային տեղը:

Մագիստրոսական ծրագրերի վերանայում.

- ներկայացվել են «Եվրոպական և միջազգային իրավունք» մագիստրոսական ծրագրերի պահպանման հիմնավորումները: Վերանայվել և կրճատվել է մագիստրոսական ծրագրերի դասընթացների ցանկը:

- Ամբիոնը նախատեսում է 2017-2018թթ. ուս. տարում հրատարակել «Միջազգային իրավունք»-ի նոր դասագիրք:

- Արտահամալսարանական գործունեություն /մասնակցությունը միջազգային և ներպետական մասնագիտական և ոչ մասնագիտական կառույցներին՝ խորհուրդներին, հանձնաժողովներին և այլն/:

1. Վահե Ստեփանյան – *Քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի անդամ*

Արդարադատության խորհրդի անդամ

2. Վիգեն Քոչարյան – *Եվրոպայի խորհրդի արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի անդամ*

ԱՊՀ արդարադատության նախարարների խորհրդի աշխատանքային խմբի ղեկավար

3. Կարեն Գևորգյան – *GRECO պատվիրակության անդամ*

4. Վլադիմիր Վարդանյան – *Միջազգային և համեմատական իրավունքի կենտրոն Ցեղասպանության հետազոտությունների միջազգային ասոցացիայի անդամ*

Պեղական քննությունների անցկացման ձևի վերանայում.

- 2017-2018 ուս. տարում բակալավրիատի պետական քննությունը «Եվրոպական իրավունք» և «Միջազգային իրավունք» առարկաներից նախատեսվում է անցկացնել գրավոր ձևով,
- կատարվում են նախնական աշխատանքներ պետական քննության ընթացքում առաջադրվելիք խնդիրների տարբերակների, ինչպես նաև գնահատման չափանիշների մշակման ուղղությամբ:

Հեռակա բաժնում ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացում.

- դասընթացները համապատասխան էլեկտրոնային ռեսուրսներով ապահովելու նպատակով թարմացվել և կայքում զետեղվել են առարկայական ծրագրերը, որոշ ուսումնական և ուսումնաօժանդակ նյութեր:

Ուսանողների հետ տարվող աշխատանքներ

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակել է գործել միջազգային և եվրոպական իրավունքի գծով ձևավորված Ուսանողական գիտական ընկերությունը:

Նախատեսվում է հաջորդ տարիներին ավելի ակտիվորեն ներգրավել ուսանողներին՝ հատուկ ուշադրություն դարձնելով աշխատությունների թեմաների ընտրության հարցերին: Սույն տարի ևս արձանագրվել է նույն խնդիրը, որն առկա էր նախորդ տարիներին, մասնավորապես այն, որ միջազգային և եվրոպական իրավունքի դասավանդումն ավարտվում է ուսուցման 4-րդ տարվա 1-ին կիսամյակում, երբ ուսանողներն սկսում են նախապատրաստվել պետական քննություններին և հնարավորություն չեն ունենում բավարար ժամանակ հատկացնել գիտական աշխատանքներ պատրաստելուն: Արդյունքում միջազգային և եվրոպական իրավունքից ուսանողական գիտական աշխատանքների քանակը քիչ է ակնկալվածից:

Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ ուսանողները մասնակցել են եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի և ՄԱԿ ՓԳՀ-ի, «Առաքելություն Հայաստան ՀԿ-ի կողմից *«Փախստականների իրավունք* վերտառությամբ կազմակերպված 5-րդ Ամառային դպրոցին:

Հեռակա բաժնում ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման նպատակով ամբիոնը կուրսի ավագի միջոցով անմիջական կապի մեջ է ուսանողների հետ: Էլեկտրոնային փոստի միջոցով ապահովվում են առարկաների անհրաժեշտ գրականությունը /նաև՝ արտասահմանյան/, ստուգաքնների և քննական առարկաների հարցաշարերը, կուրսային աշխատանքների թեմաների ընտրությունը և կատարման վերահսկողությունը: Ուսանողների ցանկացած հարց՝ կապված ուսումնական գործընթացի հետ, կարգավորվում է էլեկտրոնային փոստի միջոցով՝ ապահովելով ուսանողի հետ հետադարձ կապը:

Ամբիոնի վարիչ՝

Վ. Ստեփանյան

27.12.2016թ.